Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2
ՊԳԿՎ-2016-ՇՀԱՊՁԲ-15/1 ծածկագրով ՇՀ
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

02.06.2016թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)
Վարչության աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ Հ. Լպուտյան:

Անդամներ՝
Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)
Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի գլխավոր մասնագետ Ն.Մնացականյան
Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի գլխավոր մասնագետ՝ Գ. Գևորգյան:
Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)
Վարչության աշխատակազմի պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի օտարման բաժնի պետ՝ Ա.Գասպարյան,
Վարչության աշխատակազմի քարտուղարության արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնի պետ՝ Ն.Մելքոնյան:

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու/Մրցույթի Համակարգող(ԳՊ/ՄՀմ)
Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի առաջատար մասնագետ՝ Մ. Թադևոսյան:

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված՝ բենզին պրեմիում՝ 1290000 ՀՀ դրամ, բենզին ռեգուլյար՝ 776950 ՀՀ դրամ:

1. **Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

«ՊԳԿՎ-2016-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային www.armeps.am համակարգի միջոցով բացվել են ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության շենքում ք.Երևան, Տիգրան Մեծ 4 հասցեում, հունիսի 2-ին ժամը 10:00-ին:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և գտնվելու վայրերի հասցեները.**

N/N	Մասնակցի անվանումը	Կազմակերպության էլ. հասցեն
1	«Ֆլեշ» ՍՊԸ	flashltdtender@gmail.com

3. Տվյալներ՝ ներկայացված հայտերը ԳՊ/ԲԱ-ի կողմից սահմանված կարգի պահանջներին համապատասխան բացելու մասին.

3.1 «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ:

4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին .

4.1 **«ՊԳԿՎ-2016-ՇՀԱՊՁԲ-15/1»** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը

Պիտանելիության չափորոշիչ

1. Դիմում ՇՀ ընթացակարգին մասնակցելու մասին (Հավելված 1)
2. Մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություն *(Հավելված 2)*

Տեխնիկական չափորոշիչ

1. Մասնագիտական փորձառության մասին հայտարարություն *(Հավելված 3.1)*
2. Տեխնիկական միջոցների առկայության մասին հայտարարություն (Հավելված 3.2)
3. Ֆինանսական միջոցների առկայության մասին հայտարարություն (Հավելված 3.3)
4. Աշխատանքային ռեսուրսների առկայության մասին հայտարարություն (Հավելված 3.4)
5. Առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարություն (Հավելված 4.1)
6. Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք մատակարարելու վերաբերյալ հայտարարություն (Հավելված 4.2)

Ֆինանսական չափորոշիչ՝

1. Գնային առաջարկ (Հավելված 4)

Ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

5. Մասնակիցների առաջարկած գները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գնի առաջարկ					
		Չափաբաժին 1 Բենզին պրեմիում			***Չափաբաժին 2 Բենզին ռեգուլյար***		
		Արժեք	ԱԱՀ-ն	Առաջարկված գինը	Արժեք	ԱԱՀ-ն	Առաջարկված գինը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*
1	«Ֆլեշ» ՍՊԸ	975000	195000	1170000	584291.67	116858.33	701150

7. Հանձնաժողովը որոշեց՝

1) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 1-ին ենթակետը և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը

ա) բավարար գնահատել «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը,

բ) 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Ֆլեշ» ՍՊԸ-ին,

2) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը՝ «Ֆլեշ» ՍՊԸ-ին հրավիրել առաջարկված գների նվազեցման շուրջ բանակցությունների 2016 թվականի հունիսի 3-ին ժամը 12:00-ին:

3) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը՝

ա) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ

բ) ծանուցել «Ֆլեշ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ներկայացնել հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը:

4) Հաջորդ նիստն անցկացնել առաջարկվող ապրանքների անվանումը և տեխնիկական բնութագրերը, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված եզրակացությունը և գնահատման թերթիկների օրինակները հանձնաժողովի անդամներին տրամադրելու հաջորդ օրը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի նախագահ՝	**Հ. Լպուտյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Ն. Մելքոնյան**	.....
	Ա.Գասպարյան	.....
	Ն. Մնացականյան	.....
	Գ. Գևորգյան	.....
Քարտուղար՝	**Մ. Թադևոսյան**	.....

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 3

«ՊԳԿՎ-2016-ՇՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով ՇՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

03.06.2016թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Վարչության աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ Հ. Լպուտյան:

Հանձնաժողովի անդամներ՝

Վարչության աշխատակազմի քարտուղարության արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնի պետ՝ Ն.Մելքոնյան,

Վարչության աշխատակազմի պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի օտարման բաժնի պետ՝ Ա.Գասպարյան,

Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի գլխավոր մասնագետ Ն.Մնացականյան,

Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի գլխավոր մասնագետ Գ. Գևորգյան:

Հանձնաժողովի քարտուղար՝

Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի առաջատար մասնագետ՝ Մ. Թադևոսյան:

Նիստի օրակարգում էր «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի նվազեցման շուրջ բանակցությունները: Ընկերությունը բանակցությունների չէր ներկայացել, փոխարենը gnumner@spm.am կայքին ներկայացվել էր նվազեցված գնային առաջարկը՝ 1լ պրեմիում-380 ՀՀ դրամ, 1լ ռեգուլյար-360 ՀՀ դրամ:

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Չափաբաժին 1 Բենզին պրեմիում			Չափաբաժին 2 Բենզին ռեգուլյար		
		Արժեք	ԱԱՀ-ն	Առաջարկված գինը	Արժեք	ԱԱՀ-ն	Առաջարկված գինը
1	«Ֆլեշ» ՍՊԸ	950000	190000	1140000	568500	113700	682200

Հանձնաժողովի նախագահ՝ **Հ. Լպուտյան** .....

Հանձնաժողովի անդամներ՝ **Ն. Մելքոնյան** .....

Ա.Գասպարյան .....

Ն. Մնացականյան .....

Գ. Գևորգյան .....

Քարտուղար՝ **Մ. Թադևոսյան** .....